ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 16 դեկտեմբերի 2019թ.

2019 թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 16:00-ին Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ: Նիստին մասնակցում էին նախագահ Հայկ Վարդևանյանը, անդամներ Ավետիք Ասոյանը, Արգամ Շառյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ Աննա Սահրատյանը Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Զարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12–Ի N 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»,

համայքնի ավագանու որոշման նախագծի քննարկում:

Աննա Սահրատյանը ներկայացրեց՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12–Ի N 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագիծը: Համայնքի ղեկավարի առաջարկությամբ նախատեսվում է Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» N 17–Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված հավելված N 2-ը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները (Այսուհետ՝ Չափորոշիչներ) շարադրել նոր խմբագրությամբ:

Չափորոշիչում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

1.Ելնելով սոցիալապես անապահով ընտանիքների շահերից, հաշվի առնելով, որ նրանք ի վիճակի չեն համայնքի բյուջեի նկատմամբ իրենց պարտավորությունները բարեխիղճ կատարել, նպատակահարմար է Չափորոշիչների 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ « 2) սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը,» հանել:

2.Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն տրամադրել ըստ կարիքի, որից ելնելով Չափորոշիչների 4-րդ կետում « տրամադրվել» բառից հետո լրացնել « նաև» բառը:

3. Չափորոշիչների 7-րդ կետում «որոշումներ,» բառից հետո հանել «այդ մասին հաղորդում տալով առաջիկա ավագանու նիստում» բառերը՝ սոցիալական օգնության տրամադրման վերաբերյալ տեղեկատվությունը կրկին անգամ ավագանուն չներկայացնելու համար:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12–Ի N 17-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հայկ Վարդևանյան

_____ Ավետիք Ասոյան

_____ Արգամ Շառոյան